

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2019Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ



ԹԻՎ 10


**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում 2019թ. հոկտեմբերին**

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2019թ. հոկտեմբերը 2018թ. հոկտեմբերի նկատմամբ) կազմել է 0.9%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.6%:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ		2019թ.				
		հոկտեմբերը		հունվար- հոկտեմբերը 2018թ. հունվար- հոկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերը 2015թ. նկատմամբ **
		2018թ. հոկտեմբերի նկատմամբ	2019թ. սեպտեմբերի նկատմամբ			
		տոկոսային փոփոխություն			ինդեքս	
00	Սպառողական գների ինդեքս - ընդամենը	0.9	0.6	1.6	98.4	101.6
	այդ թվում՝					
01	սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	0.0	1.0	2.2	94.4	99.2
02	ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	4.7	0.2	4.3	104.6	113.8
03	հագուստ և կոշիկ	2.2	3.5	4.4	102.3	107.2
04	բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.1	0.5	0.4	100.6	99.1
05	տնային գործածության առարկաներ, կեն-ցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	0.0	-0.1	0.2	100.1	92.5
06	առողջապահություն	1.6	0.0	2.0	101.6	108.6
07	տրանսպորտ	2.4	-1.0	0.7	102.3	106.9
08	կապ	-0.1	0.0	-0.4	99.9	98.3
09	հանգիստ և մշակույթ	-1.1	-0.5	-2.1	97.3	104.1
10	կրթություն	3.7	0.0	1.8	103.7	112.1
11	ռեստորաններ և հյուրանոցներ	2.1	-0.3	1.9	102.7	108.4
12	տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.5	0.4	0.5	100.1	100.3

**Ենթահնդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2019թ. հոկտեմբերին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)**


%



\*\* Եվրոստատի կողմից սահմանված հղման ժամանակաշրջան:

**Ենթախնդրաների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2019թ. հոկտեմբերին (նախորդ ամսվա նկատմամբ)**

%




**Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի**

	2019թ.			
	հոկտեմբերը		հունվար-հոկտեմբերը 2018թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ	հոկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ (ինդեքս)
	2018թ. հոկտեմբերի նկատմամբ	2019թ. սեպտեմբերի նկատմամբ		
	տոկոսային փոփոխություն			
Սպառման ապրանքներ	0.7	0.8	2.1	97.3
<i>այդ թվում՝</i>				
անդամները և ոչ ակտիվային խմիչք (ներառյալ ակտիվային խմիչք և ծխախոտ)	0.5	0.9	2.4	95.4
ոչ պարենային ապրանքներ	1.2	0.6	1.5	101.2
Ծառայություններ	1.3	0.0	0.4	100.9

**Սպառողական գների հավելաճը 2010-2019թթ. հոկտեմբերին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2019թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.2% (նախորդ նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.1% նվազում):


Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 0.2-0.7%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում:

**Մեծածախ գներ:** 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 1.0% գնաճ, ինչին մեծապես նպաստել են բանջարեղենի և մրգի՝ համապատասխանաբար 5.2% և 6.7% գնաճերը:

Մրգի ապրանքախմբում<sup>1</sup> 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 8.3%, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 6.7% գնաճ:

**Մրգի գների տոկոսային փոփոխությունները 2017-2019թթ. հունվար-հոկտեմբերին**

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %




Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ մրգի գներն աճել են 1.5-9.8%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում:

Բանջարեղենի ապրանքախմբում<sup>1</sup> 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 9.3%, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 5.2% գնաճ:

**Բանջարեղենի գների փոփոխությունները 2017-2019թթ. հունվար-հոկտեմբերին**

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



<sup>1</sup> 2019թ. սեպտեմբեր-հոկտեմբերին 2018թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ բանջարեղենի գներն աճել են 1.3-9.1%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Գավառում: Մայրաքաղաքում բանջարեղենի գներն աճել են 6.1%-ով:

**2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 5.75% : Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 9.08% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 0.5 տոկոսային կետով:**

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 2.2% գնանկում, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.5% գնաճ: Չվի գինը 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 3.8%-ով, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 0.9% գնաճ:

Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում գրանցվել է 0.1-1.4% գնաճ (մայրաքաղաքում կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գներն աճել են 0.6%-ով), իսկ մեկում արձանագրվել է 0.1% գնանկում:

Հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ գրանցվել է 3.5%, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.4% գնաճ: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հացաբուլկեղենի և ձավարեղենի գներն աճել են 0.2-0.7%-ով (գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայաքաղաքում), իսկ 4-ում արձանագրվել է 0.9-0.1% գնանկում:

2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների՝ 0.2%, ոչ ալկոհոլային խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի 0.3% գնաճ:

Մսամթերքի ապրանքախմբում 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ գրանցվել է 3.0%, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.5% գնանկում:

Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ մսամթերքի գները նվազել են 0.7-0.3%-ով, 4-ում գրանցվել է 0.1-0.4% գնաճ, իսկ մեկում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում մսամթերքի գները նվազել են 0.7%-ով:

2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում արձանագրվել է 4,2%, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 2.8% գնանկում:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում գրանցվել է 4.7-0.4% գնանկում, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում գրանցվել է շաքարի և շաքարավազի ապրանքախմբի 2.6% գնանկում:

2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է ձկան և ծովամթերքի 0.1% գնանկում, իսկ յուղերի և ճարպերի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:


**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.2%, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.6% գնաճ:

2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է գրասենյակային պարագաների՝ 0.1%, կահույքի և կահավորանքի՝ 0.2%, կենցաղային և այգեգործական գործիքների, ոսկերչական զարդերի՝ 0.4%, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի՝ 0.7%, խոշոր կենցաղային սարքերի՝ 0.9%, հագուստի՝ 2.1%, տարբեր տեսակի կոշիկեղենի 5.7% գնաճ: Միաժամանակ, վառելիքային և քսայուղերի գները նվազել են 1.1%-ով, մաքրող, լվացող միջոցների՝ 0.5%-ով, դեղագործական ապրանքներին՝ 0.1%-ով, իսկ բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի, գորգերի և հատակի ծածկերի, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են՝ համապատասխանաբար 4.2% և 4.0%-ով: 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ 10.0% և 9.5%, իսկ 2018թ. դեկտեմբերի համեմատ՝ 7.3% և 7.2% գնանկում:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2016-2019թթ.

2019թ. նկատմամբ



Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.8% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է մայրաքաղաքում:


**Ծառայությունների սակագներ:** Մատուցված ծառայությունների ոլորտում 2019թ. հոկտեմբերին 2018թ. հոկտեմբերի համեմատ գրանցվել է սակագների 1.3% հավելում, իսկ 2019թ. սեպտեմբերի համեմատ սակագների մակարդակը մնացել է անփոփոխ:

2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հյուրանոցային ծառայությունների սակագները նվազել են 2.4%-ով, մարդատար տրանսպորտի ծառայություններինը՝ 1.2%-ով (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 5.4% նվազումով), հանգստի կազմակերպման համալիր ծառայություններինը՝ 0.9%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների և սպասարկման ծառայությունների (ռեստորաններ, սրճարաններ և համանման կազմակերպություններ) սակագների 0.1% հավելում, իսկ կրթության, բնակարանի նորոգման և սպասարկման, կենցաղային սարքերի նորոգման, բժշկական, կապի, վարսավիրանոցների և անձնական խնամքի սպասարկման սրահների, իրավաբանական ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.6-0.1% նվազում, իսկ 3-ում՝ 0.1-0.2% հավելում: Մայրաքաղաքում մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.1%-ով:

**ՀՀ սպառողական շուկայում սննդամթերքի (ներառյալ ոչ պկոհողային և պկոհողային խմիչք, ծխախոտ) ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների տոկոսային փոփոխությունները 2019թ. հունվար-հոկտեմբերին**


նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



**Արտարժույթի շուկա:** 2019թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական շուկայում արձանագրվել է 0.6% գնաճ, իսկ ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: 2019թ. հոկտեմբերին 2018թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գները և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը նվազել են 1.6% և 1.7%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 0.7% նվազումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.4% հավելաճով: 2019թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 476.3 դրամ, ինչը 1.8%-ով ցածր է 2018թ. հոկտեմբերի համապատասխան ցուցանիշից (484.9 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2018-2019թթ. հունվար-հոկտեմբերին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



## Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների գների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում 2019թ.

%

	Սեպտեմբեր		Հոկտեմբեր	
	2019թ. օգոստոսի նկատմամբ	2018թ. սեպտեմբերի նկատմամբ	2019թ. սեպտեմբերի նկատմամբ	2018թ. հոկտեմբերի նկատմամբ
<b>Միրգ, ընդամենը</b>	<b>-2.0</b>	<b>-1.9</b>	<b>6.7</b>	<b>8.3</b>
<i>այդ թվում՝</i>				
Խնձոր	1.5	-29.1	6.5	-10.8
Տանձ	-26.6	-5.5	-8.7	-5.2
Նուռ	-45.1	-14.7	-31.2	-7.6
Դեղձ	-5.5	-10.5	30.4	-18.2
Սալոր	-15.7	6.2	30.8	41.3
Խաղող	-26.5	-1.6	0.2	4.3
Աղամաթուզ (բանան)	5.4	-2.0	8.9	10.7
Խուրմա և արքայանարինջ	-13.2	-6.3	-24.9	5.2
Նարինջ	29.4	1.4	23.2	17.3
Մանդարին	3.0	30.5	-31.8	18.7
Կիտրոն	2.1	-1.4	-5.1	8.0
Զմերուկ	18.0	-4.8	45.6	32.0
Սեխ	41.3	-17.9	48.9	15.5
Ելակ	7.4	52.9	25.3	74.8
<b>Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը</b>	<b>2.5</b>	<b>-4.0</b>	<b>5.2</b>	<b>9.3</b>
<i>այդ թվում՝</i>				
Կաղամբ	6.9	-23.3	-4.0	-10.3
Ծաղկակաղամբ	-27.6	-22.6	-16.2	40.0
Կանաչ սոխ	30.1	1.1	-13.0	23.1
Խառը կանաչեղեն	33.5	15.3	-5.6	32.2
Լոլիկ	12.4	-40.0	62.5	0.4
Վարունգ	32.0	50.8	1.1	70.9
Սմբուկ	12.8	5.8	22.5	24.3
Պղպեղ	-4.4	-3.5	18.7	2.2
Կանաչ լոբի	30.0	12.5	15.8	77.4
Դդմիկ	6.0	-7.9	13.5	19.9
Գազար	1.0	8.4	1.0	34.5
Ճակնդեղ	4.2	-4.6	-3.7	4.0
Գլուխ սոխ	-10.9	29.6	-6.6	35.0
Սխտոր	-9.0	-38.4	5.5	-25.6
Մունկ	-0.4	-4.4	2.0	-3.6
Կարտոֆիլ	-12.3	20.0	-4.1	17.8



Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում<sup>1</sup>

	2018թ. դեկտեմբերը 2017թ. դեկտեմբերի նկատմամբ	2019թ.									
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	սեպտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ
		նախորդ ամսվա նկատմամբ									
Ավստրիա	100.1	99.0	100.0	101.1	100.3	100.1	99.9	99.2	100.1	101.0	100.6
Բելգիա	99.8	98.4	101.8	100.2	100.2	100.0	99.9	99.2	101.1	99.4	100.3
Բուլղարիա	100.0	100.2	100.3	100.2	100.6	100.2	100.0	101.3	100.2	98.8	101.8
Հունգարիա	99.6	100.3	100.6	100.7	100.9	100.7	99.8	100.2	99.9	100.0	103.1
Գերմանիա	100.2	99.0	100.5	100.5	101.0	100.3	100.3	100.4	99.9	99.9	101.7
Հունաստան	99.9	98.7	100.3	101.4	101.0	99.6	100.6	98.8	99.4	101.5	101.4
Դանիա	99.6	100.2	100.5	100.1	100.3	100.0	99.7	100.7	99.6	99.7	100.8
Իռլանդիա	99.9	99.3	100.8	100.8	100.4	99.9	100.2	99.8	100.4	99.7	101.3
Իսպանիա	99.5	98.3	100.2	101.4	101.1	100.2	99.9	98.9	99.9	100.4	100.3
Իտալիա	99.9	98.3	99.7	102.3	100.5	100.1	100.1	98.2	100.0	101.4	100.4
Կիպրոս	99.1	99.2	99.8	101.1	101.3	100.3	101.2	99.6	101.7	98.2	102.4
Լատվիա	99.7	100.3	100.1	101.1	100.9	100.6	100.3	99.1	100.2	99.8	102.5
Լիտվա	99.5	99.9	100.2	100.9	100.9	100.3	99.7	99.7	99.6	100.9	102.2
Լյուքսեմբուրգ	99.3	98.9	101.7	100.3	100.3	100.5	99.7	99.2	101.2	100.0	101.6
Մալթա	99.8	98.5	100.9	101.0	103.0	101.4	101.3	100.3	100.8	98.9	106.2
Նիդերլանդներ	100.0	99.8	101.3	100.5	101.1	99.7	99.9	100.9	100.6	98.9	102.7
Լեհաստան	100.0	99.9	100.3	100.4	101.0	100.3	100.2	100.0	99.9	100.1	102.0
Պորտուգալիա	99.6	98.7	99.7	102.1	101.0	100.3	100.4	98.3	99.9	101.4	101.7
Ռումինիա	100.1	100.9	101.0	100.5	100.7	100.5	99.6	99.8	100.0	100.1	103.1
Սլովակիա	99.9	101.2	100.2	100.7	100.2	100.4	100.1	100.1	100.2	100.1	103.2
Սլովենիա	99.4	99.1	100.7	100.7	100.7	100.8	100.3	99.3	100.4	99.9	101.9
Միացյալ Թագավորություն	100.2	99.3	100.5	100.2	100.6	100.3	100.0	100.0	100.4	...	...
Ֆինլանդիա	99.8	99.6	100.5	100.1	100.7	99.8	100.0	99.7	100.4	100.0	100.9
Ֆրանսիա	100.1	99.4	100.1	100.9	100.4	100.1	100.3	99.8	100.5	99.6	101.1
Խորվաթիա	99.4	99.4	100.1	100.8	100.6	100.4	100.3	100.5	99.6	99.8	101.5
Չեխիայի Հանրապետություն	100.0	101.0	100.3	100.2	100.1	100.7	100.2	100.4	100.1	99.5	102.5
Շվեդիա	100.5	98.9	100.7	100.2	100.7	100.3	99.8	100.5	99.5	100.5	101.1
Էստոնիա	99.7	99.6	100.2	100.4	101.5	100.4	100.5	99.7	100.7	99.8	102.8
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-28) <sup>2</sup>	100.0	99.2	100.4	100.8	100.7	100.2	100.1	99.7	100.1	100.2	101.4
Հայաստան	101.5	101.8	100.6	100.1	99.9	99.6	98.1	98.1	99.6	100.2	97.9
Ռուսաստան	100.8	101.0	100.4	100.3	100.3	100.3	100.0	100.2	99.8	99.8	102.3
Բելառուս	100.8	100.9	101.3	100.4	100.0	100.3	99.9	100.2	99.8	100.5	103.4
Ուկրաինա	100.8	101.0	100.5	100.9	101.0	100.7	99.5	99.4	99.7	100.7	103.4
Ղազախստան	100.7	100.5	100.3	100.5	100.5	100.6	100.2	100.2	100.2	100.3	103.3
Ղրղզստան	100.7	100.4	99.8	99.7	99.6	100.1	100.6	99.9	100.0	100.3	100.6
Մոլդովա	100.9	101.3	100.4	100.5	100.8	101.4	99.8	99.8	100.0	100.8	104.9
Տաջիկստան	105.4	100.6	100.6	100.3	101.0	101.0	100.4	100.9	100.9	100.6	...
Վրաստան	101.5	101.3	100.3	101.0	100.2	100.5	99.0	100.0	100.8	101.7	104.8
Կանադա	99.9	100.1	100.7	100.7	100.4	100.4	99.8	100.5	99.9	99.6	102.1
Նորվեգիա	100.0	99.4	100.9	100.1	100.5	99.7	100.1	100.6	99.3	100.5	101.1
Բրազիլիա	100.2	100.3	100.4	100.8	100.6	100.1	100.0	100.2	100.1	100.0	102.5
Կորեայի Հանրապետություն	99.7	99.9	100.4	99.8	100.4	100.2	99.8	99.7	100.2	100.4	100.8
Չինաստան	100.0	100.5	101.0	99.6	100.1	100.0	99.9	100.4	100.7	100.9	103.1
ԱՄՆ	99.7	100.2	100.4	100.6	100.5	100.2	100.0	100.2	100.0	100.1	102.2
Թուրքիա	99.6	101.1	100.2	101.0	101.7	100.9	100.0	101.4	100.9	101.0	108.4
Շվեյցարիա	100.0	99.4	100.3	100.3	100.6	99.8	100.2	100.0	100.1	99.6	100.3
Ճապոնիա	99.7	100.1	100.0	100.0	100.3	100.0	99.9	99.9	100.3	...	...

... - Տվյալները բացակայում են:

<sup>1</sup> Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2019թ. սեպտեմբերի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

<sup>2</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

**«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2019թ. հունվար-նոյեմբերին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2019 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2019թ. դեկտեմբեր ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, հավելված 3, էջ 112):**